Հաստատում եմ: Տնօրեն՝ /Է. Հովհաննիսյան/

Ստուգված է: Փոխտնօրեն՝ /Ս. Հակոբյան/

Քննարկված է 30.08.2023թ. դասղեկների մ/մ նիստում:

Մ. Իշխանի անվ. N 5 դպրոց

6-րդ

ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՊԼԱՆ

ԴԱՍՎԱՐ՝ Լ. Հարությունյան

2023– 2024 ՈՒՍ.ՏԱՐԻ

Ուսումնա-դաստիարակչական նախատեսված աշխատանքները 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում.

- ✓ Կահավորել և ձևավորել դասասենյակը:
- ✓ Հետևել դասասենյակի և շրջապատի մաքրությանը:
- ✓ Ուշադրություն դարձնել աշակերտների արտահագուստին:
- ✓ Դասարանում սահմանել հերթապահություն:
- ✓ Ընտրել ակտիվի կազմը:
- ✓ Աշխատանք տանել աշակերտների ուսման առաջադիմության բարձրացման ուղղությամբ և հասնել գիտակցական կարգապահության:
- ✓ Սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ:
- ✓ Ապահովել դասղեկ-ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը:
- ✓ Սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ,կապ պահպանել գրադարանի հետ:
- ✓ Ուշադրություն դարձնել աշխատանքային դաստիարակությանը:
- ✓ Ակտիվորեն մասնակցել աշակերտական խորհրդի աշխատանքներին:
- ✓ Ամեն կերպ օգնել և աջակցել ետ մնացող աշակերտներին:
- ✓ Ստեղծել փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ:
- ✓ Ստեղծել և ձևավորել համերաշխ աշակերտական կոլեկտիվ:
- ✓ Աշխատանք տանել հաճախակի ուշացող և բացակայող աշակերտների հետ: Հնարավորինս հասնել այդ երեվույթի վերացմանը:
- ✓ Ուշադրություն դարձնել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին:
- ✓ Ակտիվորեն մասնակցել դպրոցի հասարակական աշխատանքներին:
- ✓ Կազմակերպել դաստիարակչական, ճանաչողական էքսկուրսիաներ:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԿՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, հոգատար, սիրալիր, բարեկիրթ, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Սովորեցնել Աստծո 10 պատվիրանները և ուղղություններ տալ՝կյանքում դրանք ճիշտ կիրառելու: Աշակերտների հետ տանել զրույցներ մարդասիրական, հայրենասիրական թեմաներով: Սերմանել մարդկային բարձր որակներ դասընկերների և ուսուցիչների նկատմամբ:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ–Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ, կազմակերպել տարիքային կինոդիտումներ և ներկայացումների դիտումներ, դրանք քննարկել և վերլուծել:Տարբեր առարկաների շրջանակներում կազմակերպել ուսումնադաստիարակչական արտադասարանական էքսկուրսիաներ՝ դասն ավելի արդյունավետ և հետաքրքիր անցկացնելու նպատակով:

ՌԱԶՄԱ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-Անցկացնել զրույցներ հայրենասիրական թեմաներով, սեր արթնացնել դեպի հայրենիքը,հայրենի հողը, մայր բնությունը, ծանոթացնել մեր հերոսներին, կազմակերպել էքսկուրսիաներ դեպի պատմական հուշահամալիրներ : Երեխաների մեջ զարգացնել հայրենասիրական բարձր գիտակցություն, հայրենիքի համար պիտանի լինելու , ի բարօրություն հայրենիքի ծառայելու զգացում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Զրույց՝ «առողջ մարմնումառողջ հոգի» թեմայով : Հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին, համադպրոցական և միջդասարանային սպորտային միջոցառումներին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Դասարանում պահպանել մաքրություն, կարողանալ գնահատել իր և ընկերոջ կատարած աշխա-տանքը, պահպանել և անհրաժեշտության դեպքում վերանորոգել գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը: Սովորեցնել ճիշտ և կազմակերպված աշխատել:

2. 22.10. – 26.10.2023թ. Աշակերտների հաճախումների, ուշացումների, արտաքին տեսքի մասին: Լսել դասավանդող ուսուցիչներին, ներկայացնել ընթացիկ գնահատականները:

3. 17.12. – 21.12.2023թ. Կիսամյակի ամփոփում

4. 18.03. – 22.03.2024թ. Դպրոցական ռեժիմը:

5. 20.05. – 24.05.2024թ. Կիսամյակի, ուսումնական տարվա արդյունքների ամփոփում և քննաշրջանի մեկնարկ:

Զրույցներ ծնողների հետ

1. «Դպրոցականի ռեժիմի մասին»
2. «Համակարգչի դերը երեխայի հետաքրքրությունների ձևավորման գործում»
3. «Թրաֆիքինգ»
4. Դեռահասության մարտահրավերներ

6-րդ դասարանում դասավանդող ուսուցիչներ 2023-2024թթ

- ՄԱՅՐԵՆԻ -Լ. Հովհաննիսյան
- ՌՈՒՍԵՐԵՆ -Ա. Խաչատրյան
- ԱՆԳԼԵՐԵՆ -Ա. Պողոսյան
- ԳԵՐՄԱՆԵՐԵՆ -Ն. Աղայան
- ՀԱՅՈՑ ԵԿ. ՊԱՏՄ -Ռ. Երվանդյան
- ՄԱԹԵՄԱՏԻԿԱ - Ն. Եսայան
- ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ -Ա. Մարուքյան

- ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ -Մ. Հովհաննիսյան
- ԿԵՐՊԱՐՎԵՍՏ -Ս. Հակոբյան
- ՏԵԽՆՈԼՈԳԻԱ -Ս. Հակոբյան, Լ. Սիմոնյան
- ՀԱՅՈՑ ՊԱՏՄ՝ -Ռ. Երվանդյան
- ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Պ՝ - Ռ. Երվանդյան
- ԱԶԳ. ԵՐԳ ՈՒ ՊԱՐ - Ս. Հակոբյան
- ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ - Հ. Սաֆարյան
- ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Գ. Խաչատրյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԿԶԲԻՆ

- ✓ Մաքրել և վերակահավորել դասարանը:
- ✓ Կազմել աշակերտների ցուցակը և ժամանակավոր դասամատյանը:
- ✓ Կազմակերպել դասագրքերի ստացումը գրադարանից և բաշխումը աշակերտներին:
- ✓ Կազմել դասասենյակը մաքրելու հերթապահության գրաֆիկ:
- ✓ Աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն:
- ✓ Աշակերտների հետ համատեղ ընտրել տարվա ընթացքում քննարկվելիք թեման և դասղեկի ժամերին անցկացվելիք զրույցների թեմատիկան:
- ✓ Ուսումնասիրել աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները, պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:
- ✓ Ընտրել դասարանի ակտիվ՝ ավագ, օգնականներ,աշակերտական խորհրդի անդամներ:
- ✓ Հավաքել սպառիչ տեղեկություններ լրացուցիչ կրթության հաստատություններում, խմբակներում աշակերտների մասնակցության մասին:

- ✓ Աշակերտների ազատ ժամանակը ճիշտ կազմակերպելու նպատակով տանել բացատրական աշխատանք՝ ընդգրկելու նրանց դպրոցում գործող արտադասարանական խմբակներում:
- ✓ Ցուցաբերել մանկավարժական աջակցություն աշակերտների ինքնավարության դասարանական մարմնին (ակտիվին):
- ✓ Ընտրել ծնողկոմիտեի անդամներ և նախագահ:
- ✓ Ունենալ ծնողների ձեռագրերի և ստորագրությունների նմուշները:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ✓ Կատարել աշակերտների հաճախումների հաշվառում:
- ✓ Հետևել աշակերտների արտաքին տեսքին:
- ✓ Հետևել աշակերտների անձնական հիգիենային:
- ✓ Հետևել աշակերտների սնվելուն ու բարեկիրթ վարքին՝ բուֆետում և ճաշարանում:
- ✓ Հետևել դասասենյակի մաքրությանը՝ ըստ նախապես կազմված հերթապահության գրաֆիկի:
- ✓ Ստուգել օրագրի, դասագրքերի և տետրերի առկայությունը ըստ դասացուցակի:
- ✓ Վերցնել բջջային հեռախոսները:
- ✓ Հետևել, որ աշակերտները դասամիջոցներին <u>չբղավեն, չվազեն և չհրմշտեն</u> իրար:
- ✓ Հնարավորինս կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները:

✓ Նախորդ օրը բացակայած աշակերտներից պահանջել բժշկի տեղեկանք կամ ծնողի գրություն:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

✓ Դասամատյանի վարման վերահսկողություն:
✓ Օրագրերի վարման վերահսկողություն:
✓ Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում:
✓ Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանց ծնողների հետ:
✓ Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշումներ կայացնել:
✓ Զրուցել անհարգելի բացակայող և հաճախակի ուշացող աշակերտների և նրանց ծնողների հետ:
✓ Ըստ գրաֆիկի հերթապահության կազմակերպում սրահում:

ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

✓ Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում, խորհուրդ ներում և ակումբներում:
✓ Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին:
✓ Ծնողներին տեղեկացնել իրենց երեխաների ստացած գնահատականների մասին:

✓ Լավ սովորող աշակերտների միջոցով օգնել թույլ աշակերտներին՝ բարձրացնելու առաջադիմությունը:
✓ Կազմակերպել դասարանին հատկացված դպրոցամերձ տարածքի մաքրումը:

✓ Հանդիպել նախադպրոցական կրթության մեջ ներգրավված աշակերտների ծնողների և հատուկ մանկավարժների հետ:

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

✓ Պահել ծնող - ուսուցիչ կապը:
✓ Հետևել դասագրքերի պահպանմանը:
✓ Կազմակերպել երեխաների առողջության պահպանման հետ կապված բժշկական երաշխավորությունների կատարումը:

✓ Անցկացնել ծնողական ժողովներ և պլանավորված զրույցներ:
✓ Հետևողական աշխատանք տանել ուսման առաջադիմության բարձրացման նպատակով:
✓ Կազմակերպել էքսկուրսիաներ ՀՀ պատմա-մշակութային օջախներ:
✓ Անցկացնել դաստիարակչական թեստեր և կազմակերպել բանավեճեր աշակերտներին հուզող թեմաներով:
✓ Աշխատանք տանել, որ աշակերտները մասնակցեն արտադասարանական միջոցառումներին:
✓ Դասամատյանի, աշակերտական օրագրերի և այլ փաստաթղթերի վարման կազմակերպում:
✓ Կատարել զուգահեռ դասարանի աշակերտների օրագրերի վարման փոխադարձ ստուգում:
✓ Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների (աշակերտների միջև,աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական) կարգավորում, համակարգում, վերլուծություն:

ԿԻՍԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՈՒՄ

ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ✓ Կիսամյակի ամփոփում:
- ✓ Կիսամյակային հաշվետվության հանձնում:
- ✓ Ծնողական ժողով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ✓ Տարեկան գնահատականների և դաստիարակչական աշխատանքների ամփոփում:
- ✓ Ծնողական ժողով:
- ✓ Տարեկան հաշվետվության հանձնում:
- ✓ Դասագրքերի վերանորոգում և հանձնում գրադարան:
- ✓ Դասասենյակի մաքրում և հանձնում:
- ✓ Երեխաների ծնողներից տեղեկություններ հավաքել նրանց ամառային հանգստի կազմակերպման մասին:
- ✓ Աշակերտական ակտիվի, ծնողների, հնարավոր է նաև զուգահեռ դասարանի հետ համատեղ կազմակերպել դասարանի ամառային էքսկուրսիան:
- ✓ Դասամատյանի ստուգում և հանձնում:
- ✓ Լրացնել աշակերտների անձնական գործերը:

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ 2022-2023թթ.

N	Թեմա	Կատարող Անձ	Կատարման ժամկետը	Կատարման մասին	Նշումներ
	Գիտելիքի օր, կազմակերպչական հարցեր:	Դասղեկ	01.09.2023թ		
1.	Անձնական հիգիենայի կանոններ:	Դասղեկ	05.09-07.09		
2.	Անկախության դերը:	Դասղեկ, աշակերտներ	10.09-14.09		
3.	Մեր երկրի հերոսական անցյալը: Հայաստանի երրորդ հանրապ. մասին	Դասղեկ	17.09-21.09		
4.	Ի՞նչ եմ ուզում դառնալ:	Աշակերտներ	24.09-28.09		
5.	Շնորհավոր տոնդ, ուսուցիչ	Դասղեկ	01.10-05.10		
6.	Ի՞նչ է թրաֆիքինգը:	Դասղեկ, աշակերտներ	08.10-12.10		
7.	Թրաֆիքինգի դրսևորումները:	Դասղեկ	15.10-19.10		
8.	Մուշեղ Իշխան	Դասղեկ	22.10-26.10		
9.	Հայաստանի զինանշանի և դրոշի, օրհներգի ստեղծման պատմությունը	Դասղեկ	05.11-09.11		
10.	Հանդուժողականություն:	Դասղեկ, աշակերտներ	12.11-16.11		

11.	Անհանդուրժողականության դրսևորումները:	Դասղեկ, աշակերտներ	19.11-23.11	
12.	Ներողամտություն՞ն, թե՞ վրեժխնդրություն:	Դասղեկ, աշակերտներ	26.11-30.11	
13.	Բնական աղետների մասին:	Դասղեկ, աշակերտներ	03.12-07.12	
14.	Անհատական պաշտպանության միջոցները :Թիմային աշխատանք/հանդ./	Դասղեկ	10.12-14.12	
15.	Ամանորյա միջոցառում:	Դասղեկ , աշակերտներ	17.12-21.12	
16.	Հանդուրժողականություն և օրենք	Դասղեկ	II կիսամյակ 07.01-11.01	
17.	Հայաստանի պատմության հերոսական էջեր	Դասղեկ	14.01-18.01	
18.	Շնորհավոր տոնդ հայ զինվոր:	Դասղեկ, աշակերտներ	21.01-25.01	
19.	Մենք հզոր ենք մեր բանակով:	Դասղեկ, աշակերտներ	28.01-01.02	
20.	Մարդը և օրենքը: Իրավունքներ և պարտականություններ :	Դասղեկ	04.02-08.02	
21.	Մայր իմ անուշ ու անգին:	Դասղեկ, աշակերտներ	11.02-15.02	
22.	Քրիստոնյա Հայաստան	Դասղեկ, աշակերտներ	18.02-22.02	

23.	Էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոն	Աշակերտներ	25.02-01.03		
24.	Խոսենք հայերեն /մայրենիի օր/	Դասղեկ, աշակերտներ	04.03-08.03		
25.	Գրքի դերը. Դասեր՝ քաղված գրքերից:	Դասղեկ, աշակերտներ	11.03-15.03		
26.	Մարդկանց շահագործման կանխարգելում:	Դասղեկ	18.03-22.03		
27.	Մարդկանց շահագործման զոհերի պաշտպանությունը և աջակցությունը:	Դասղեկ	01.04-05.04		
28.	Զատկի տոնի խորհուրդը:	Դասղեկ, աշակերտներ	08.04-12.04		
29.	Խաղաղության մշակույթ:	Դասղեկ, աշակերտներ	15.04-19.04		
30.	Մեծ եղեռն: Այցելություն Ծիծեռնակաբերդ:	Դասղեկ, աշակերտներ	22.04-26.04		
31.	Աշխարհը պետք է ճանաչի Հայերի ցեղասպանությունը	Դասղեկ, աշակերտներ	29.04-03.05		
32.	Կարող եմ արդյոք ներել :Ամեն ինչի սկիզբը սերն է	Դասղեկ	06.05-10.05		
33.	Արցախյան հերոսամարտ :Պատերազմ տեսած մանուկները	Աշակերտներ	13.05-17.05		
34.	Մայիսյան	Աշակերտներ	20.05-24.05		